«Բանբեր գրականութեան եւ արուեստի» («Բանբեր»), գրական-գեղարվեստական վեցամսյա հանդես: Հրատարակվել է Ս. Պետերբուրգում, 1903-1904 թթ.: Խմբագրել–է Ն. Ադոնցը:

«Բիւզանդիոն», գրական, քաղաքական և գիտական օրաթերթ: Լույս է տեսել Կ. Պոլսում, 1896-1918 թթ.:

«Գեղարուեստ», գրական, արվեստագիտական պատկերազարդ հանդես: Լույս է տեսել 1908-1921 թթ. Թիֆլիսում, ընդմիջումներով: Խմբագրել և հրատարակել է Գարեգին Լևոնյանը:

«Գեղունի», պատմաբանասիրական, գրական-գեղարվեստական պատկերազարդ հանդես: Լույս է տեսել 1901-1949 թթ. ընդմիջումներով, Վենետիկում:

«Դաշինք», գրական-քաղաքական օրաթերթ: Լույս է տեսել Զմյուռնիայում 1909-1915 և 1919 թվականներին՝ իբրև շարունակություն «Արեւելեան մամուլ»-ի (տե՛ս սույն ցանկում):

«Դրօշակ», Հայ Յեղափոխական Դաշնակցություն կուսակցության պաշտոնաթերթ: Հիմնվել է 1890 թ. Թիֆլիսում, այնուհետև հրատարակվել է Ժնևում (1892-1914), Փարիզում (1925-1933), Բեյրութում (1969-1985), Աթենքում (1986-1996): 1999-ից լույս է տեսնում Երևանում:

«Երկրագունտ», գրական և գիտական ամենամսյա հանդես, լույս է տեսել Կ. Պոլսում, 1883-1888 թթ.:

«Երկրի Ձայնը», գրական, քաղաքական-հասարակական պատկերազարդ շաբաթաթերթ: Լույս է տեսել Թիֆլիսում, 1906-1908 թթ.:

«Թատրոն», երգիծական շաբաթաթերթ: Հրատարակվել է Կ. Պոլսում 1874-1877 թթ., խմբագրությամբ Հակոբ Պարոնյանի:

«Ժամանակ», օրաթերթ, հրատարակվել է Թիֆլիսում: